ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք.Երևան «3» փետրվարի 2022թ №159-Ա

«ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, 2022 ԹՎԱԿԱՆԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի N 40-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման 4-րդ կետի 15-րդ ենթակետի ա. պարբերությամբ.

հ ր ա մ ա յ ու մ ե մ.

1. Հաստատել «Հավատարմագրման ազգային մարմին» պետական ոչ առևտրային կազմակերպության՝

1) հաստիքացուցակը՝ համաձայն N 1 հավելվածի,

2) 2022 թվականի եկամուտների և ծախսերի նախահաշիվը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. «Հավատարմագրման ազգային մարմին» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ ընկերության աշխատակիցների խրախուսումն իրականացնել

կանխատեսվող եկամուտների ապահովման դեպքում և այն համաձայնեցնել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության հետ:

3" Որակի ենթակառուցվածքների զարգացման վարչությանը և Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչությանն ապահովել Հայաստանի Հանրապետության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման 4-րդ կետի 15-րդ ենթակետի ա. պարբերությամբ սահմանված պահանջների կատարումը սույն հրամանի հաստատումից հետո 10 օրյա ժամկետում:

4" Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2021 թվականի հունվարի 29-ի ««Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի 2021 թվականի հաստիքացուցակը, եկամուտների և ծախսերի նախահաշիվը հաստատելու և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2020 թվականի փետրվարի 1-ի N 196-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 40-Ա հրամանը:

5" Սույն հրամանը տարածվում է 2022 թվականի հունվարի 3-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

6" Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ Նարեկ Տերյանին:

Recoverable Signature

X

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Signed by: KEROBYAN VAHAN 1110760124

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ